

### Պաշտպանություն անօրինական տուգանքներից

Կարգապահական իրավախախտում կատարելու, այսինքն՝ աշխատողի կողմից իրեն հանձնարարված աշխատանքային պարտականությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կերպով կատարելու դեպքում, գործատուն իրավունք ունի կիրառել կարգապահական տույժեր՝ զգուշացում, նկատողություն, համապատասխան հիմքեր ունենալու դեպքում, նաև՝ աշխատանքից ազատում (ՌԴԱՕ192-րդհոդված):

### Ինքնապաշտպանություն

Աշխատողը կարող է ինքնուրույն պաշտպանել իր իրավունքները:

Գործատուն, գործատուի ներկայացուցիչները իրավունք չունեն արգելելու աշխատողին ինքնուրույն պաշտպանելու իր աշխատանքային իրավունքները (ՌԴԱՕ 380-րդ հոդված):

Աշխատողի գրավոր դիմումի հիման վրա գործատուն պարտավոր է ոչ ուշ, քան այդ դիմումը ներկայացնելուց երեք աշխատանքային օրվա ընթացքում աշխատողին հանձնել աշխատանքային գրքույկը, աշխատանքի հետ կապված փաստաթղթերի պատճենները (աշխատանքի ընդունվելու հրամանի, այլ աշխատանքի տեղափոխման հրամանի, աշխատանքից ազատման հրամանի պատճենները, քաղվածքներ աշխատանքային գրքույկից, տեղեկանք աշխատավարձի վերաբերյալ, պարտադիր կենսաթոշակային ապահովագրության հաշվարկված և փաստացի վճարված ապահովագրավճարների, այդ գործատուի հետ աշխատանքի ժամանակահատվածի վերաբերյալ և այլն (ՌԴԱՕ 62-րդհոդված):

### Արհմիության օգնությունը

Յուրաքանչյուր աշխատող իրավունք ունի դառնալ արհմիության անդամ և իր իրավունքները պաշտպանելիս օգտվել դրա աջակցությունից:

### Պետական վերահսկողություն աշխատանքային օրենսդրության պահպանման հարցում

Աշխատանքային օրենսդրության պահպանման դաշնային պետական վերահսկողությունը և աշխատանքային իրավունքների նորմերը պարունակող այլ իրավական նորմատիվ ակտերի հսկողությունն իրականացնում է Ղրիմի Հանրապետության աշխատանքի տեսչությունը (ՌԴԱՕ 353-րդ հոդված): Աշխատանքի տեսչությունը աշխատողի պահանջով կարող է գործատուին պարտավորեցնել վճարել աշխատավարձի պարտքերն՝ առանց դատարանի մասնակցության (ՌԴ ԱՕ 360.1 հոդված):

Դատախազությունը կարող է գործատուին պարտավորեցնել վճարել աշխատավարձի պարտքերը, ինչպես նաև գործ հարուցել՝ ելնելով աշխատողի շահերից:

ՌԴ ՆԳՆ միգրացիայի վարչությունը կարող է գործատուին պատասխանատվության ենթարկել օտարերկրյա քաղաքացիներին աշխատանքի ընդունելու ժամանակ կատարած խախտումների համար: Երկու կամ ավելի ամիս աշխատավարձ չվճարելու դեպքում աշխատողը կարող է դիմել ՌԴ քննչական կոմիտե: Աշխատավարձի վճարման երկար ժամկետով հետաձգումը քրեական հանցագործություն է (ՌԴ քրեական օրենսգրքի 145.1-ին հոդված):

### Դատական պաշտպանություն

Աշխատողն իրավունք ունի անձնական աշխատանքային վեճի լուծման համար դիմել դատարան՝ երեք ամսվա ընթացքում այնօրվանից, երբ տեղեկացել է կամ պետք է տեղեկանար իր իրավունքի խախտման մասին, իսկ աշխատանքից ազատելու վերաբերյալ վեճերի համար՝ իրեն աշխատանքից ազատելու հրամանի պատճենը հանձնելու օրվանից մեկ ամսվա ընթացքում, կամ աշխատանքային գրքույկը տրվելու օրվանից, կամ այն օրվանից, երբ աշխատողին աշխատանքից ազատելու առիթով նրան հանձնվել են տեղեկություններ իր վերջին գործատուի մոտ աշխատելու ժամանակահատվածում իր աշխատանքային գործունեության մասին (ՌԴ ԱՕ 392-րդ հոդված):

### ԱՇԽԱՏԱՆՔԻ ՈՐՈՆՈՒՄ

**www.trudvsem.ru** – Աշխատանք Ռուսաստանում կայք

### Ղրիմի Հանրապետությունում միգրացիայի ոլորտում ծառայություններ մատուցող ձեռնարկություն

Ղրիմի Հանրապետությունում և Սևաստոպոլ քաղաքում ՌԴ ՆԳՆ ՖՊՄՁ (ֆեդերալ պետական ունիտար ձեռնարկություն) «Անձնագրային և վիզաների ծառայության» մասնաճյուղ
**Հասցեն**՝ *295026, Ղրիմի Հանրապետություն, ք. Սիմֆերոպոլ, Կիևսկայա փ., 86 ա*
**Հեռախոս**՝ *+7 (3652) 66-94-04*
**Էլեկտրոնային փոստ**՝ *krim@pvsmvd.ru*

ГОСУДАРСТВЕННЫЙ КОМИТЕТ
ПО ДЕЛАМ МЕЖНАЦИОНАЛЬНЫХ ОТНОШЕНИЙ
РЕСПУБЛИКИ КРЫМ

# ԲԱՐԻ ԳԱԼՈՒՍՏ ՂՐԻՄ

## ԱՇԽԱՏԱՆՔԻ ՏԵՂԱՎՈՐՈՒՄ ԵՎ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ

ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ԳԱՂԹԱԿԱՆԻՆ

**2021**

*Եթե եկել եք Ռուսաստան աշխատելու, կարևոր է իմանալ Ձեր իրավունքներն ու պարտականությունները: Դա կօգնի Ձեզ խուսափելու դժվարություններից:*

**Այս պարզ խորհուրդները կօգնեն Ձեզ**

**Աշխատե՛ք օրինական.** անօրինական աշխատանքը օրենքի լուրջ խախտում է: Եթե աշխատում եք, ապա պետք է ունենաք աշխատանքային կամ քաղաքացիական-իրավական պայմանագիր:

**Իմացե՛ք Ձեր իրավունքները.** գործատուն պետք է Ձեզ հանձնի Ձեր պայմանագրի պատճենը, որը պետք է վավերացվի գործատուի ստորագրությամբ ու կնիքով, նա պետք է աշխատավարձը վճարի ժամանակին: Աշխատելով աշխատանքային պայմանագրով՝ Դուք ունեք արձակուրդի, հանգստյան օրերի և հիվանդության թերթիկի վճարումների իրավունք:

**Պետքէ ճանաչեք Ձեր գործատուին.** Դուք պետք է իմանաք այն կազմակերպության անունն ու հասցեն, որտեղ աշխատում եք, ձեր ղեկավարի տվյալները (ազգանունը, անունը և հեռախոսահամարը):

**Մի՛ դիմեք միջնորդներին.** զգո՛ւյշ եղեք. միջնորդները կարող են Ձեզ օգտագործել որպես անվճար աշխատուժ:

**Աշխատավարձի վճարման չափի և ժամկետների վերաբերյալ պետք է լինի հստակ համաձայնություն.** Դուք պետք է իմանաք, թե որքան պետք է Ձեզ վճարեն և ինչ աշխատանքի համար: Դա պետք է գրված լինի պայմանագրում: Դուք պետք է գումարը ստանաք կամ Ձեր բանկային քարտին, կամ հաշվապահությունում անձամբ և Ձեր ստորագրությամբ: Հաշվապահությունում իրավունք ունեք ստանալու վճարման հաշվարկային թերթիկ:

Եթե Ձեզ փող են պարտք, գործատուից անդորրագիր պահանջեք և պահեք այն Ձեզ մոտ:

**Ուշադի՛ր կարդացեք այն ամենը, ինչ ստորագրում եք, պահանջե՛ք կրկնօրինակները.**

Դուք իրավունք ունեք չստորագրելու փաստաթղթերը, եթե համաձայն չեք դրանց բովանդակությանը և պայմաններին:

Եթե փաստաթուղթն անձամբ Ձեզ է վերաբերում, Ձեզ պետք է պատճեն տրվի:

**Մի՛ տվեք Ձեր փաստաթղթերը գործատուին.** ոչ ոք իրավունք չունի գրավ վերցնել Ձեր անձնագիրը, աշխատանքային արտոնագիրը, ապահովագրությունը, աշխատանքային պայմանագրի և այլ փաստաթղթերի Ձեր օրինակը, ինչպես նաև սահմանափակել Ձեր տեղաշարժի ազատությունը, վերցնել Ձեր հեռախոսը և այլն: Եթե Ձեր անձնագիրը վերցրել են կամ սահմանափակել են Ձեր ազատությունը, դա համարվում է լուրջ հանցագործություն: Այդ դեպքում դիմեք ոստիկանություն: Աշխատանքային հերթապահության և աշխատավարձի հաշվարկների աշխատանքային օրագիր վարեք, գործատուի և նրա ներկայացուցիչների հետ բոլոր բանակցությունները ձայնագրեք աուդիո և վիդեո, լուսանկարեք և պահպանեք Ձեր աշխատանքին վերաբերող բոլոր Ձեզ հասանելի փաստաթղթերի պատճենները. այդ տվյալները կարող են ապացույցներ դառնալ Ձեր աշխատանքային վեճում, այդ թվում՝ նաև դատարան դիմելիս:

**Օգնությա՛ն դիմեք.** եթե գործատուն խախտում է Ձեր իրավունքները: Ոստիկանությունը, դատախազությունը, մարդու իրավունքների հանձնակատարը, աշխատանքի տեսչությունը, դատարանը և հասարակական կազմակերպությունները կօգնեն ձեզ:

**Աշխատողի աշխատանքային իրավունքները գրանցված են ՌԴ աշխատանքային օրենսգրքում (ՌԴ ԱՕ)**

**Իրավունքներիպաշտպանություն աշխատանքի տեղավորվելու ժամանակ**

Աշխատանքային պայմանագիրը Ձեզ պետք է տրվի ոչ ուշ, քան աշխատանքի փաստացի անցնելուց երեք օրվա ընթացքում: Աշխատողի աշխատանքի փաստացի ընդունման դեպքում գործատուն պարտավոր է նրա հետ գրավոր ձևով կազմել աշխատանքային պայմանագիր աշխատողի՝ աշխատանքի իրական ընդունման օրվանից ոչ ուշ, քան երեք աշխատանքային օրվա ընթացքում: (ՌԴԱՕ 67-րդ հոդված):

Յուրաքանչյուր աշխատողի համար, եթե այս գործատուի մոտ աշխատանքը հիմնականն է աշխատողի համար, և աշխատել է նրա մոտ ավելի քան հինգ օր, գործատուն վարում է աշխատանքային գրքքույկ (ՌԴԱՕ 66-րդ հոդված):

Աշխատանքի ընդունումը ձևակերպվում է գործատուի հրամանով: Աշխատողն իրավունք ունի ստանալու աշխատանքի ընդունվելու հրամանի պատճենը (ՌԴԱՕ 68-րդ հոդված):

Աշխատանքային օրվա տևողությունը չի կարող գերազանցել 8 ժամը, իսկ աշխատանքային շաբաթը՝ 40 ժամը: Արտաժամյա աշխատանքի համար նշանակվում են լրացուցիչ վճարներ (ՌԴԱՕ 152-րդ, 153-րդ և 154-րդ հոդվածների համաձայն):

Աշխատանքային պայմանագիրը պարտադիր ձևով պետք է պարունակի աշխատողի սոցիալական ապահովագրության պայմաններ՝ տարեկան վճարովի արձակուրդ (28 աշխատանքային օր), հիվանդության թերթիկ (հիվանդության դեպքում) և առաջնային բուժ-սանիտարական օգնություն, ինչպես նաև՝ շտապ մասնագիտացված բժշկական օգնություն (ՌԴԱՕ 115, 183, 327.3 հոդվածներ):

**Լիարժեք զբաղվածության պայմաններում աշխատողի աշխատավարձը չի կարող ցածր լինել աշխատանքի վճարի նվազագույն քանակից (ԱՎՆՔ): 2021 թվականի հունվարի 1-ի դրությամբ Ղրիմի Հանրապետությունում ամսական նվազագույն աշխատավարձը կազմում է 12,792,00 ռուբլի:**

**Պաշտպանություն աշխատանքից ապօրինի հեռացման դեպքում**

Աշխատանքից ազատելը չի կարող լինել աշխատանքի նախորդ ժամանակահատվածի աշխատավարձը չվճարելու պատճառ:

Եթե աշխատանքային պայմանագիրն ավարտվել է, գործատուն պարտավոր է վճարել աշխատակցին պարտավորված բոլոր գումարները աշխատանքից ազատման օրը կամ աշխատակցի կողմից վճարման գրավոր պահանջագիր ստանալու հաջորդ օրը (ՌԴԱՕ 84-րդ և 140-րդ հոդվածների համաձայն):

Աշխատանքային պայմանագրի վերջին օրը գործատուն պարտավոր է աշխատողին հանձնել աշխատանքային գրքույկը կամ տեղեկություններ տրամադրել այս գործատուի մոտ աշխատանքային գործունեության մասին:

Աշխատանքից ազատվելու ժամանակ աշխատակցին պետք է տրվի աշխատանքից ազատման հրամանը և վերադարձվի նրա աշխատանքային գրքույկը՝ աշխատանքից ազատելու մասին նշումով:

**Իրավունքների պաշտպանություն աշխատավարձը ուշացնելու դեպքում**

Եթե աշխատավարձը հետաձգվում է ավելի քան 15 օր, աշխատողն իրավունք ունի դադարեցնել աշխատանքը մինչև աշխատավարձի վճարումը (ՌԴԱՕ 142-րդ հոդվածի 2-րդմաս): Այս մասին աշխատողը պետք է գրավոր տեղեկացնի գործատուին:

Գործատուն կրում է պատասխանատվություն աշխատավարձի հետաձգման և աշխատանքի վարձատրման այլ խախտումների համար (ՌԴԱՕ 142-րդ հոդված):

**Կարևոր է հասկանալ:** Միգրանտը, որը կյանքի իրավիճակի ինչ-որ հանգամանքների բերումով, մնացել է առանց աշխատանքի, անօրինական վիճակում, կարող է դառնալ ծայրահեղականների և ահաբեկչական կազմակերպությունների կողմից հավաքագրման օբյեկտ:

Ներկայումս ծայրահեղականությանը, որպես այլ ազգության և կրոնական պատկանելության անձանց նկատմամբ ատելություն կամ թշնամանք հրահրելու գաղափարախոսությանը, ինչպես նաև պետական համակարգի բռնի փոփոխմանը կամ բռնազավթմանը հակազդելը ՌԴ ազգային անվտանգության ապահովման կարևորագույն ուղղությունն է:

ՌԴ-ում ծայրահեղականության տարբեր դրսևորումների համար նախատեսվում է ինչպես վարչական, այնպես էլ՝ քրեական պատասխանատվություն:

Ծայրահեղականության ու ահաբեկչության պատճառով առաջացած անդառնալի հետևանքները կանխելու նպատակով՝ օգնության համար դիմեք ոչ թե ընկերներին կամ միջնորդներին, այլ ՌԴ պետական քաղաքականության նպատակներն ու խնդիրներն իրագործող պետական կազմակերպություններին, որոնք իրականացնում են այդ խնդիրների ձևավորումը, կատարումը, հսկողությունն ու վերահսկումը:

